

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 մարտի 2014 թ.

N 138-Ա

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆԴՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ  
ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ  
2014 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 14-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1-Ն որոշման 17-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **որոշում է**:

Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենդանական աշխարհի պահպանության և վերարտադրության միջոցառումների 2014 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## **Ծ Ր Ա Գ Ի Ր**

### **ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆԴՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ**

#### **1. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենդանական աշխարհի պահպանության ծրագրի նպատակն է խթանել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի պահպանումն ու վերարտադրությունը:

#### **2. ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ**

Բնության հատուկ պահպանվող տարածքների, ինչպես նաև կենդանական աշխարհի պահպանության և վերարտադրության միջոցառումների բացակայության պատճառով նվազում են վայրի կենդանիների, թռչունների գլխաքանակը և ձկան պաշարները:

#### **3. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենդանական աշխարհի պահպանության և վերարտադրության միջոցառումների 2014 թվականի ծրագրի շրջանակներում նախատեսվում է ձեռքբերել փասյանի, կաքավի և որոշ հազվագյուտ վայրի թռչունների գլխաքանակ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում վերարտադրության համար:

Ձկան պաշարների ավելացման և Սարսանգի ու Մատաղիսի ջրամբարների օգտագործման արդյունավետության բարձրացման նպատակով, ձեռք բերել և ջրավազաններում բաց թողնել ծածան տեսակի մանրաձկներ:

Նախատեսել վայրի թռչունների համար որոշ տարածքներում ծովի մակարդակից 1500-2500 մետր բարձրության վրա ձմեռային ժամանակաշրջանում գիշատիչների համար դժվարամատչելի և դժվարանց թփուտներում կերի պաշարների տեղադրումը:

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել բնապահպանության համակարգի տարածքային պետական տեսուչների, անտառային պետական ծառայության, ինչպես նաև համայնքների ներկայացուցիչների հետ համատեղ:

#### **4. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

Կենդանական աշխարհի պահպանության և վերարտադրության միջոցառումների իրականացման համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեից նախատեսվում է հատկացնել 6 000 000 (վեց միլիոն) դրամ: